

**Գ. Հայությունյան – Ելույթ Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների եւ ներկայացուցիչների համահայկական համաժողովում (Երևան, 19 սեպտեմբերի, 2011թ.)**

## **ԴԱՅԱՍՏԱՆ – ՍՓՅՈՒՌՔ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԵՐԸ**

Հարգարժան հայրենակիցներ,

Երկար մտորումներից հետո այս գեկույցը վերնագրեցի «Հայաստան-Սփյուռք գործակցության համակարգային զարգացումների ներկա հրամայականները», նկատի ունենալով, որ մենք այսօր կանգնած ենք մեր արածի ու անելիքի վերախմասավորման, երկու դասնամյակ բոլորող փորձից դասեր քաղելու եւ ժամանակի մարդարավերներին արժանապարփիվ դիմակայելու անհրաժեշտության առջեւ:

Չեմ փորձի նորից ու կրկին շեշտել հիմնախնդրի բացառիկ կարեւորությունը: Դրա մասին շատ է ասվել ու ասվում: Տասնամյակներ, նույնիսկ դարեր շարունակ միաբանության կոչեր ենք հնչեցրել՝ չհասնելով ցանկալիին: Այսօր կարող եմ պարզապես փաստել, որ, մեր կարծիքով, Հայաստան – Սփյուռք գործակցության գործառնական ու կառուցակարգային ներկա համակարգերը **ՆԵՐԴԱՂՆԱԿ չեն հայության առջեւ ծառացած մարդարավերներին:** Անկախ պետականության հասպարումից ի վեր մեզ չի հաջողվել գրնել գործակցության համակարգային այնպիսի լուծումներ, որոնք մեր համահավաք ներուժի գործադրման առավել մեծ երաշխիքներ կապահովեին: Հայության համար դա եղել ու շարունակում է մնալ ինքնահասպարման գերխնդիր: Աշխարհում դեղի ուեցող վայրիվերումները, մեր շուրջ ու մեզանում սպեղծված կացությունը հայությանն այլընդրանք չեն թողնում՝ կամ

պետք է բռնցքվել՝ մեր ինքնության ապագան երաշխավորված փեսնելու համար, կամ այն կտրվի բախսրի քմահաճույքին:

Լինել-չլինելու այս հրամայականը դրված է ներկա հայ սերնդի, բոլորիս առջեւ եւ պահանջում է ինքնազոհություն ու խիզախում՝ «ԵՍ»-ի կապանք-ներից ազադվելու ու «ՄԵՆՔ»-ի բեռն ուսելու համար: Մենք իրավունք չունենք մեր ՇԱՅԿԱՎԱՆ աշխարհի շենացմանը չփալով մեր քրդինքի կաթիլը՝ այսօր եւ վաղը մեր որդիներին սպիալել փալու իրենց արյունը եւ կյանքը:

Առանց չափազանցելու կարող եմ Զեզ հավասպիացնել, որ հայության համահավաք ներուժը չի սահմանափակվում նրա 8-10 միլիոն թվաքանակով: Այն իր մարդկային, փորձառական, քաղաքակրթական, աշխարհաքաղաքական, փնտեսական եւ բազմաթիվ այլ որակներով կրկնակի ու եռակի ավելին է, որը լիովին բավարար է հայ ինքնությանը գոյապայքարի ուղեծրից կայուն զարգացման ուղեծիր դուրս բերելու համար: Այդ ներուժի համափեղումն ու գործադրումը համազգային ինքնակազմակերպման նոր որակ է պահանջում, ինչին, կարծում եմ, դեռեւս չենք հասել:

Որոնք են դրա պահճառները:

Ամենաընդհանուր ձեւով դրանք կարելի է բաժանել երկու խմբի.

1. Հայաստանում պետքականության կայացման ու քաղաքացիական հասարակության ձեւավորման դժվարությունները, քաղաքական համակարգի անկարարությունը եւ քաղաքական աղանդավորության վրանգավոր ծավալումը, պետքական մդածողության ու պետքական կառույցների գործունակության պակասը, դրանց արդյունքում՝ դարաբնույթ հիմնախնդիրների լուծման ու բացասական երեւոյթների հաղթահարման դանդաղումը, դեռեւս գոյություն ունեցող անվարահության եւ անհամերաշխության մթնոլորդը, հայ ինքնության համահավաք ըմբռնումների մեջ համազգային առաջնահեր-

թությունների ու մարդաբավկերների իրավեսորեն ընկալման պակասը, կարեւորագույն հիմնախնդիրների եսակենքուն ընկալումները եւ այլն:

2. Սկզբունքում հարվածական անհամաձայնությունների շարունակումն ու խորացումը, դրա նոր որակն ու բնույթը վերջին գասանամյակների արդագաղթի արդյունքում, նեղ, հարվածական շահերի թելադրանքով գարբեր ուժերի կողմից Հայաստանի նկարմամբ անվարահության իրահրումը, Հայաստան-Սփյուռք գործակցության նոր որակի ու կառուցակարգային լուծումների անհամարժեք ընկալումները եւ այլն:

Բնականաբար, կարելի է նաև ասվածի շրջանակներն ընդլայնել, սակայն թվարկված պարագաները, թերեւս, վերջին գասանամյակների իրականության մեջ ելակեպային են:

Մենք սկզբունքային ենք համարում նաև այն հանգամանքը, որ հայ ժողովրդի ապագան չի կարող մեկուսի քննարկվել՝ այն կրթելով Հայաստան - Արցախ - Սփյուռք եռամիանական շղթայի համակարգային գործակցության ներկա վիճակից ու հեռանկարներից: Տարիների ընթացքում փոխվել են նաև մեր զարգացման առաջնահերթությունները՝ գոյապայքարի խնդիրներին եկել են փոխարինելու կայուն ու պետական զարգացման խնդիրները, իսկ մարդկանց զգայական մղումներն իրենց դեղն ասդիճանաբար զիջում են առավել պրագմատիկ մոդելումներին: Դա բնական է ու պահանջում է համազգային գործակցության համարժեք մակարդակ:

Հայ-թուրքական արձանագրությունների առիթով ՀՀ Նախագահի՝ գարբեր երկրներ կափարած այցելությունները, այդ եւ այլ առիթներով բազմաթիվ հանդիպումները մեր հայրենակիցների հետ աներկբայորեն վկայեցին ու վկայում են, որ այսօրվա համաշխարհային մարդաբավկերներին հայ ժողովուրդը կարող է դիմակայել միայն ու միայն իր հավաքական ներուժին ապավինելով: Հանրապետության Նախագահը պարզ ու հսկակ բանաձեւեց՝ Հայաստանը մի բան է առանց սփյուռքի, եւ բոլորովին մեկ այլ բան՝

սփյուռքով հանդերձ: Այս բանաձեւումից միանշանակ հետեւում է նաև, որ հայ ժողովրդին մի ապագա է սպասվում՝ իր երեք հարվածների ներդաշնակ ու համերաշխ գործակցության, հարվածական շահերի հաղթահարման պարագայում, եւ բոլորովին մեկ այլ ու ոչ ցանկալի ապագա՝ անհաշվության ու հարվածական շահերով պարփակվելու պարագայում: Իրոք, «Նայասպան-Վրցախ-Սփյուռք» միասնությունը կարող է սարեր շուր դալ: Մեր համազգային գործակցության բնույթով, մակարդակով, կառուցակարգային լուծումներով են պայմանավորված նաև այն հարցերի պարասխանները, թե որո՞նք են մեր համազգային ներուժն իմի բերող առաջնահերթությունները, դրանցում պետքության, ազգային ու համազգային կառույցների կոնկրետ դերն ու դերակարգարությունը, ինչպես համախմբել ուժերն ու կարողությունները հայ ինքնությանն սպառնացող մարդարավերներին արժանավայել դիմակայելու, համահայկական միասնական մրածողություն ձեւավորելու համար:

Ցանկանում եմ կրկին շեշտել՝ այսօր, առավել քան երբեւէ, մեր համազգային կարողունակության միաբանման հրամայականի առջեւ ենք կանգնած: Ուժերի ցանկացած ջլարում անդառնալի հետեւանքներ կարող են ունենալ: Սակայն միաբանման ցանկությունը միայն բավարար չէ: Մենք, մեր սերունդը, այսպես ներկաները դարպապարփած ենք զբնել ու գործադրել այնպիսի լուծումներ, որոնք արյան ու ավիշի պորբալարային կապ կսկեղծեն մեր ազգային ինքնության երեք հարվածների միջեւ, ազգային ողջ ներուժը կուղղեն մեր համազգային առաջնահերթությունների իրացմանը: Այս ինդիրը, անշուշտ, առավելապես պետքության խնդիրն է: Սակայն յուրաքանչյուր հայ եւ հայկական յուրաքանչյուր կառույց այս հարցում կարող է ու պետք է ծանրակշիռ դերակարգարություն ունենա:

Գեղեցիկ խոսքեր շաբ են ապել ու ասվում, այժմ գեղեցիկ գործերի ժամանակն է: Ուսպի չեմ ցանկանում վերացական դարպողություններ անել կամ քննարկման առարկա դարձնել արդեն իսկ եղածն ու արվածը: Պար-

զապես համոզված եմ, որ ապագա գործակցության բանալին պետք է փնտրել որակապես նոր լուծումների, երկխոսության ու գործակցության առավել ակտիվ ու համակարգված ձևերի մեջ:

Նոր իրականության պայմաններում Հայաստան – Սփյուռք գործակցության հայեցակարգի մշակմանը եւ ձեռնամուխ եմ եղել դեռեւս 1991 թվականից: Առաջին քայլերն արվեցին «Հայաստան» համահայկական հիմնադրամի գաղափարախոսությունը եւ կառուցակարգային լուծումներն առաջադրելիս: Տեղազայում Սփյուռքի շաբ գործիչների ու կառույցների հետ համակողմանի քննարկումների արդյունքում մշակված հայեցակարգային փաստաթուղթը 1998 թվականին քննարկման առարկա դարձավ նաև ՀՀ Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդում եւ միաձայն հավանության արժանացավ: Այն հետազայում, ցավոք, չիրացվեց զուր քաղաքական դրդապատճառներով: Տասնամյակների ընթացքում այս հարցում, համոզված եմ, մեծ են եղել բացթողումները: Հապաղումն այլեւս չի կարող պարմական արդարացում ունենալ:

Ամենից առաջ անհրաժեշտ է կարեւորել այն պարագան, որ պետքանության վերահաստափումն ազգային կյանքում բեկումնային քայլ է, եւ այն պահանջում է ազգային արժեքների վերահմաստավորում եւ արժեհամակարգային հսկակ կողմնորոշում: Մենք պետքականության կայացման դժվարին ճանապարհի միայն առաջին քայլերն ենք անում: Պետքականությունն ազգային զարթոնքի լուրջ նախադրյալ դարձնելու համար մեզանից պահանջվում է դեւական, կազմակերպված ու դժվարին աշխատանք՝ բնականաբար, հաշվի առնելով նաև միջազգային զարգացումների նորագույն միջումները, մեր հնարավորությունները մարդկային քաղաքակրթությանը ներդաշնակվելու կարողունակությունը:

Մենք չենք կարող վայրկյան անգամ մոռացության տալ, որ պետքանության կայացման դժվարագույն ու դարերի բեռով ծանրացած խնդրի

լուծման հետ մեկտեղ, մեր ազգային գերակայությունների մեջ բացառիկ դեղու ունի արցախյան հիմնահարցի արժանապարփիվ ու հիմնարար լուծումը:

Մենք չենք կարող եւ իրավունք չունենք ազքաթող անել Սփյուռքում պեղի ունեցող ազգային ինքնության ասդիմանական կորսափի միտումները:

Այդ ամենով հանդերձ, մեր պարմական պարփքն ու պարասխանագությունն է ամուր ու անսասան հիմքեր սպեղծել հայոց անկախ պետականության կայացման ու զորացման համար, որը նաեւ համազգային այլ հիմնախնդիրների հաջողությամբ լուծման երաշխիքն է:

Ակնհայր է, որ թե՛ Հայաստանի, թե՛ Արցախի եւ թե՛ Սփյուռքի առջեւ ներկայումս ծառացած են անհետաձգելի լուծում պահանջող ազգային գերինդիրներ: Առավել քան ակնհայր է նաեւ այն, որ այդ ինդիրները լուծելի են մեր ազգային երեք այդ որակների սերփ ու շարունակական գործակցության, ազգային միաբանության գերազույն չափանիշով առաջնորդվելու, ցանկացած բնույթի հարվածական շահ դրան սպորադական պայմաններում միայն:

Գաղփնիք չէ նաեւ, որ ազգային միասնության գաղափարը հայ իրականության մշտական ուղեկիցն է եղել: Այլ հարց է, թե այն ինչպես է միս ու արյուն սփացել եւ պարմական փարբեր հանգրվաններում դարձել կենսական առաջնորդիչ ուժ:

Ազգային ինքնահասպարման ներկա հրամայականները պարզապես պահանջում են, որպեսզի ազգային միասնության գաղափարը ներկա հայ սերունդը դարձնի իր ներքին կարողունակության զորաշարժի գործուն նախադրյալ եւ այդ հիմքի վրա նոր հազարամյակում լուծելի դարձնի մեր ազգի երեք փարանջապ հարվածների գերինդիրները:

Անհրաժեշտ դասեր քաղելով նաեւ անցյալի փորձից՝ մենք նման ընդգրկման ինդիրներ չենք կարող լուծել **առանց անկեղծ երկխոսության**, դրա շնորհիվ ու այդ ճանապարհով ազգային առաջնահերթությունների հսկա-

կեցման եւ հարագի գործակցության այնպիսի ձեւերի ընդունության, որոնցով հնարավոր կդառնա Երկխոսությունը փեղափոխել առարկայական ինդիքների լուծման հարթություն։ Մենք պարզապես այլընդրանք չունենք։

Բարեբախսրություն է, որ Հայաստանի Հանրապետության Նախագահն ինքը նախաձեռնեց նման Երկխոսության յուրահագույք քայլը, փաստեց դրա բացառիկ կարեւորությունը, Հայաստան-Սփյուռք հարաբերությունների նոր որակի սկիզբ դրեց։ Պակաս կարեւոր քայլ չէր նաեւ սփյուռքի նախարարության սփեղծումն ու փիկին Հակոբյանի ջանադիր աշխատանքը։ Սակայն ժամանակի մարդարավերներն ավելին են պահանջում։

Այդ թելադրանքով է, որ այսօր փնդրվում են համազգային գործակցության նոր լուծումներ։ Բնականաբար, սա շարունակական գործընթաց է։ Միաժամանակ, այն, ինչ այսօրվա հրամայականն է, վաղվան ձգել այլեւս չի կարելի։

Մեր խորին համոզմամբ՝ նման հրամայական է նաեւ **Համազգային խորհրդի** կազմավորումը, որը կիրականացնի ոչ միայն հումանիտար ոլորդում, այլեւ բոլոր առումներով համազգային Երկխոսության համակարգված ու շարունակական ծավալման, մեր ազգային առաջնահերթությունների հսկակեցման, ազգային համահավաք ներուժը դրանց իրականացմանն ուղղորդելու առաքելություն։ Բարեբախսրաբար այս գաղափարը գնալով ավելի ընկալելի է դառնում։

Նման հարցադրման պարագայում անհրաժեշտ եմ համարում շեշտել, որ խոսքը չի վերաբերում սփյուռքում կամ հայրենիքում գործող կառույցներին փոխարինող մի նոր կազմակերպական ձեւ ընդունուն։ Հարկապես սփյուռքյան բոլոր կազմակերպություններն սփեղծված պարմական իրավիճակում ջանացել են ազգային ինքնության պահպանման լուրջ դերակարություն սփանձնել ու իրականացնել՝ ծավալելով քաղաքական, կրթամշակութային, բարեգործական եւ այլ բնույթի ազգօգուփ աշխատանք։ Խոսքն այսօր Երկխո-

սության ու գործակցության բոլորովին նոր որակի ու ընդգրկման մասին է, որի շրջանակներում գործող յուրաքանչյուր կազմակերպություն, համոզված եմ, ազգի ու ժողովրդի համար պարմական պահի բախսորոշության գիտակցումով դրանում իր ակրիվ մասնակցության հնարավորությունը կունենա:

**Անկախ նրանից, թե հայր որպես, ինչ հասարակական-պետական համակարգում է ապրում, ինչպիսի լեզվամբածողական, ազգային արժելնկալման, հոգեւոր ու ճանաչողական առանձնահարկություններ ունի, որպես ընդհանրական ու հավաքական հարկանիշ է մնում պարմական ճակարտագիրը, պարմական հիշողությունը, գեսակի պահպանության նկարմամբ բնական պարբռն ու պատասխանադրվությունը։ Սա պետք է դառնա մեր գործակցության գլխավոր կարգախոսը։**

Սփյուռքի բոլոր ազգային կառույցները, անկախ նրանից, թե որ երկրում եւ ինչ պայմաններում են գործել, մշտապես ունեցել են մի գերխնդիր՝ պայքարել ազգային ուժացման, ազգային արժեքների, որակների կորսպի, պարմական հիշողության ասդիճանական մարման դեմ։ Նսկայական ջանքեր են գործադրվել ոչ միայն լեզվամբածողության ու ընդհանրապես ազգային գեսակի պահպանության ուղղությամբ, այլև ակրիվ քայլեր են կափարվել ազգային նոր արժեսպեղծման գործում։

Չփորձելով գնահարել գոյություն ունեցող գարբեր կառույցների իրական ու հնարավոր դերակարգարությունն այս հարցում, անառարկելի է, որ այսօր պահանջվում է գործակցության որակապես նոր մակարդակ։ **Դրա ձեւավորման հիմքում կարող են դրվել հետեւյալ սկզբունքային մոդեգումները.**

1. նման համակարգի ձեւավորման նախաձեռնումն ու իրականացումը հաջողություն կարող են ունենալ միայն պետականորեն երաշխավորված լինելու պարագայում,

2. այդ համակարգում պետք է իրենց փեղն ունենան եւ ներկայացուցչական լիակատար պարագան ապահովեն Հայաստանի Հանրապետությունը, Արցախը, Սփյուռքը, ինչպես նաև հայ եկեղեցին,

3. Հայաստանը եւ Արցախը պետք է ներկայացված լինեն իրենց պետրականությամբ, Սփյուռքը եւ եկեղեցին՝ իրենց ներկայացուցչական հանգամանքով,

4. այդ համակարգի գործունեությանը պետք է հաղորդել ազգային- հասարակական-խորհրդադրվական բնույթ,

5. համահայկական հիմնահարցերը եւ դրանց կոնկրետ լուծումները քննության առարկա պետք է դառնան Հայաստանում, Արցախում եւ հայաքնակ դարբեր երկրներում՝ փեղական առանձնահավկությունները խորությամբ հաշվի առնելով,

6. Սփյուռքի հետ հարաբերությունների եւ համազգային դարողության հարցերում Հայաստանի ու Արցախի պետրական կառույցները պետք է հաշվի առնեն համազգային երկխոսության արդյունքում ծնված երաշխավորությունները,

7. Սփյուռքի յուրաքանչյուր կազմակերպություն համազգային հարցերի առնչությամբ նույնպես պետք է հաշվի առնի այդ երաշխավորությունները:

Մեր քննարկումները հանգեցնում են այն հետեւությանը, որ նշված սկզբունքներից ելնելով՝ անհրաժեշտ է կազմավորել Հայաստան-Արցախ-Սփյուռք «**ՀԱՄԱԳԱՅԻՆ ԽՈՐՃՈՒԹՅՈՒՆ**», որի գերագույն խնդիրն է լինելու շարունակական ու համակարգված երկխոսության միջոցով երաշխիքը դառնակ համազգային գործակցության այնպիսի համակարգի, որը հնարավորություն կրա շարունակաբար հսկակեցնել հայ ժողովրդի ազգային առաջնահերթությունները եւ համահավաք մասնակցությամբ նախադրյալներ ու միջոցներ սփեղծել դրանց իրականացման համար, որի շնորհիվ մեր ձայնը միմյանց լսելի ու մեր անելիքները միմյանց հասկանալի կդառնան:

**Նամազգային խորհրդի քննարկման առարկա կարող են դառնալ ազգային գերակայությունների հսկակեցման, դրանց վերաբերյալ ընդհանրական եւ փոխհամաձայնեցված հայեցակարգերի մշակման, համազգային նշանակության քաղաքական, տնտեսական, գիտակրթական, հոգետրմշակութային, տեղեկադրվական, հումանիտար եւ այլ ծրագրերի մշակման ու իրականացման հարցեր:**

**Նշված ուղղություններով կձեւավորվեն հագուստ մասնագիտական հանձնախմբեր:** Կառուցակարգային լուծումների մանրամասները, բնականաբար, մեր կողմից նույնպես վաղուց մշակվել են: Սակայն Զեզ փորձեցի ներկայացնել միայն հայեցակարգային ընդհանուր մոդելը մերժումները, ինչին վերջին 15 տարիների ընթացքում հրապարակավ անդրադառնում եմ արդեն հինգերորդ անգամ, եւ հուսով եմ, որ հաջորդ անդրադարձը կվերաբերի արդեն գործող կառույցին:

**Նամոզված եմ նաեւ, որ այս խորհրդի գործունեության եւ համազգային գործակցության նման որակի պայմաններում անհամեմատ արդյունավետ ու նպատակալաց կդառնա նաեւ հայկական տարբեր կառույցների օգտաշափ գործունեությունը:**

Մեր հաջողությունների կամ հնարավոր անհաջողությունների պատճառները մեզանից դուրս չպետք է փնտրենք, **այն պարզապես մեր համազգային միաբանության ու գործակցության պավկերի արդացոլումն է:**

Խոսքս ավարտեմ Ամենայն Հայոց 131-րդ կաթողիկոս Գարեգին Առաջինի խորունկ մտքով. «Ամեն մի ազգ, հայրենիք, եկեղեցի ամեն բանից առաջ եւ վեր՝ իր սեփական, յուրահապուկ ներքին ուժերով, կարողունակություններով եւ իր անդամների նվիրաբերությամբ ու զոհողությամբ կարող է մնալ առողջ, անսասան ու առաջադեմ: Ոչ մի արքաքին ուժ եւ օգնություն իր ամբողջական իմաստը եւ բարերար արժեքը չի գտնի առանց այդ ներքին ազգային ինքնեկ առողջության եւ գործության: ... Ես կոչ եմ անում մեր

Ժողովրդի բոլոր խավերին, բոլոր զավակներին, եթե ուզում եք հայրենիքն ուժեղացնել, մի ցրեք ձեր ուժերը ամեն կողմ, կենդրոնացրեք, սեւեռակեփի վերածեցեք, առվակեցեք ջուրը՝ ոռոգելու համար մեր հայրենի հողը»:

Այս էր սիրելի Վեհափառի պարզամը: Եկեք ականջալուր լինենք այդ պարզամին:

Շնորհակալություն ուշադրության համար: